ՀՀ Լոռու մարզի Կաթնաջրի Ս. Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց

Ուսումնական նախագիծ

Ինտեգրված հետազոտական աշխատանք

Առարկա -«Հայ գրականություն» և «Հայոց պատմություն»

Թեմա-« Հայկ և Բել պատմադիցաբանական ակնարկ»

Ուսուցիչներ- Անահիտ Սիմոնյան, Աննա Նիկողոսյան

Աշակերտներ- Ալվարդ Ամիրբեկյան, Զինա Վարդերեսյան,

Նարե Մանուկյան, Նարե Պալյան,

Հերիքնազ Ասատրյան

Կաթնաջուր 2023

Հետազոտության անցկացման մեթոդը՝ հետազոտության իրականացման համեմատական մեթոդ

Ժողովուրդների և լեզուների առաջացման հարցը պատմագրության մեջ միշտ էլ ունեցել է առանձնահատուկ նշանակություն: Յուրաքանչյուր ժողովրդի կազմավորման մասին գոյություն ունեն պատմություններ, առասպելներ, որոնք պատմագրության մեջ ունեն առանցքային նշանակություն:

Հայ ժողովրդի կազմավորման առնչությամբ գոյություն ունեն ավանդազրույցներ, որոնք փոխանցվել են օտար պատմիչների միջոցով, սակայն հայոց պատմագրության մեջ առավել ընդունելի է «Հայկ և Բել» առասպելը: Առասպելը քննարկվում է ինչպես պատմագրության, այնպես էլ բանասիրության շրջանակում:

Առասպելի առաջին նշանակությունը Հայկի կերպարն է, ով սիրելով ազատությունը հրաժարվեց հնազանդվել Բելին և իր զորքի հետ տեղափոխվեց հյուսիս, այնուհետև հանուն այդ ազատության պահպանման ճակատամարտեց Բելի դեմ և հաղթանակ տարավ՝ իր սերունդներին ժառանգելով անկախություն:

Առասպելը առանցքային է, քանի որ Հայկը ներկայացվում է որպես նախահայր, ով մեզ ժառանգել է հայրենիք ու անկախություն, սակայն այդ ամենի հետ մեկտեղ ժառանգել է նաև բնավորություն, դա իր ազատասիությունն է, որը պետք է փոխանցվի սերդեսերունդ և որպես առանձնահատկություն արտահայտվի յուրաքանչյուր սերնդի դիմագծում՝ իբրև պտուղ, քանի որ մեր ժողովրդի կազմավորման արմատները խորհրդանշում են ազատասիրությունը և հանուն դրա պայքարը: Առասպելի հաջորդ առանցքային կողմը Բելն է ու նրա զոռոզությունը, ինչն էլ նրա պարտության և կործանման պատճառ դարձավ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ առասպելում հերոսը և հակահերոսը ոչ միայն Հայկն ու Բելն են,այլ ազատասիրությունը և զոռոզությունը: Այս ամենը եզրակացնելու առիթ է տալիս, որ առասպելը ոչ միայն պատմություն է կամ առասպել, այլ նաև փիլիսոփայություն, որը ցույց է տալիս թե որքան կարևոր է միշտ սիրել ազատությունը և գնալ դրա հետևից, քանի որ այն հաղթանակի խորհրդանիշն է, իսկ զոռոզությունը՝ պարտության: Այսինքն որպես արմատներ և ժառանգություն ունենալով ազատասիրությունը՝ պետք է պահպանենք և հավատարիմ մնանք մեր ժառանգությանը, որը տրվել է հաղթանակի տեսքով, իսկ հաղթանակից հետոն պիտի նորից լինի ազատասիրությունը, այլ ոչ թե զոռոզությունը, որը խարհրդանշում է պարտություն և անկում:

Հայկի բնավորության հաջորդ առանցքը հպարտությունն ու քաջությունն են, որոնք արտացոլվել են պայքարի միջոցով: Անհրաժեշտ է պատմությունից առաջ անցնել ու գալ դեպի մեր ժամանակներ և ստեղծել Հայկի կերպարի հավաքականությունը, քանի որ առասպելը սովորեցնում է նաև մտածել, թե մենք որքանով ենք հավատրիմ մնացել և տեր կանգնել մեր ժառանգությանը, կարող ենք մեզ համեմատել Հայկի հետ և մեր բնավորությունը նույնացնել, առանձնացնել հերոսների, ովքեր խորհրդանշում են նորօրյա Հայկին:

Անդրադառնանք նաև պատմականությանը, քանի որ այսօր պատմագրության ոլորտում կան միտումներ՝ Հայկին համարելու կիսաառասպելական կամ պատմական կերպար: Այս ուղղությամբ կատարվել են հետազոտություններ պատմական սկզբնաղբյուրներից: Հայկ և Բել առասպելի պատմական սկզբնաղբյուր են համարվում Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» և Սեբեոսի «Պատմությունը», ինչպես նաև Աստածաշունչը: Համեմատելով ժողովուրդների առաջացման պատմական և առասպելական համարվող պատմությունները՝ գտնում ենք ընդհանրություններ Աստվածաշնչի հետ: Համաձայն Աստածաշնչի Ծննդոց գրքի 10-րդ գլխի՝ ջրհեղեղից հետո մարդկության հետագա զարգացումը և կազմավորումը տեղի է ունեցել Նոյի երեք որդիների միջոցով: Մենք Հաբեթածին ազգ ենք համարվում, իսկ Հաբեթի տոհմը ներկայացվում է այսպես՝

Հաբեթի որդիները՝ Գամերը, Մագովգը, Մադայը, Հավանը, Թոբելը, Մոսոքը և Թիրասը

Գոմերի որդիները՝ Ասքանաս, Ռիփաթ, Թորգոմ:

Հայ ժողովուրդը համարվում է Թորգոմի ազգ և հայտնի է, որ դեռևս Ք. ա. 20-րդ դարում Հայկական լեռնաշխարհի տարածքում գոյություն է ունեցել Թորգոմի տունը, ինչը հիշատակվում է նաև Աստվածաշնչում: Կա տեսակետ, որ այն այդպես է կոչվել հենց Թորգոմի անունով, իսկ Միջագետքյան աղբյուրներում այն կոչվում է Թեգարամա: Աստվածաշնչում չեն հիշատակվում Թորգոմի ժառանգները և Հայկի մասին խոսք չկա, սակայն հատկանշական է, որ հիշատակվում է Բելը՝ Նեբրովթ անունով:

Հայկի և Բելի առնչությամբ հաջորդ աղբյուրը Խորենացու «Պատմությունն է»: Խորենցին իր պատմությունը գրելիս օգտվել է Մարյան աղբյուրներից, մեհենագրերից, այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ Քրիստոնեության ընդունումից հետո մեհենագրերը ոչնչացվել են: Խորենացին իր աշխատության մեջ ոչ միայն անդրադարձել է ճակատամարտին, որը տեղի է ունեցել Ք. ա. 2492թ, այլև Հայկի տոհմին: Խորենացին այն ներկայացրել է հետևյալ կերպ՝

Հաբեթը ծնում է Գամերին

Գամերը ծնում է Թիրասին

Թիրասը ծնում է Թորգոմին

Թորգոմը ծնում է Հայկին

Հայկը ծնում է Արամանյակին

Արամանյակը ծնում է Արամայիսին

Արամայիսը ծնում է Ամասիային

Ամասիան ծնում է Գեղամին

Գեղամը ծնում է Հարմային

Հարման ծնում է Արամին

Արամը ծնում է Արա Գեղեցիկին:

Նկատենք որ մինչև Հայկը Խորենացու և Աստվածաշնչի ներկայացրած ծագումնաբանությունը համընկնում են, իսկ Հայկից սկսած Խորենացին ավելացրել է ծագումնաբանությունը, ըստ էության հիմք ընդունելով այլ աղբյուրներ: Նաև նկատենք, որ այնուամենայնիվ Բելը Աստվածաշնչի համաձայն պատմական կերպար է: Պետք է նաև համեմատություն անցկացնել Կովկասյան ժողովուրդների ծագման վրացական առասպելի հետ: Համաձայն այդ առասպելի՝ կովկասյան ժողովորդները առաջացել են Թորգոմից, ով ունեցել է 8 որդի: Այս առնչությամբ ևս տեսնում ենք նույնություն:

Հայոց ծագումնաբանությանն է անդրադարձել նաև պատմիչ Սեբեոսը, ով որպես հայոց նախահայր համարում է Հայկին, ով ճակատամարտից առաջ Բելին զգուշացնում է, որ իրեն չհետապնդի, եթե ցանկանում է ապրել:

Հարկ է նաև առանձնացնել Բելին, որպես դիցաբանական կերպարի, ով նույնացվել է Սատուրն մոլորակին: Սեմական ցեղերը նախապես Բել են անվանել ամեն մի կուռքի, յուրաքանչյուր ցեղ ունեցել է իր Բելին: Բնակություն հաստատելով Միջագետքում և ընդունելով շումերական հնագույն դիցարանը՝ սեմական ցեղերն ու ժողովուրդները Շումերի գլխավոր աստված Էնլիլին անվանել են Բել: Բելը նույնացվել է նաև Մարդուկ աստծուն, և նրա հիշատակը տոնվել Նոր տարվա սկզբին, Բաբելոն քաղաքի գլխավոր տաճարում: Հիշենք, որ Բելը համարվել է Բաբելոնի արքա, իսկ բաբելացիները եղել են սեմիտական ազգ, այսինքն այս առասպելադիցաբանական պատմության կողքին ևս հնարավոր է մտածել պատմականության մասին:

Ենթադրություններ՝

1. Առասպելի հիմքում ընկած է պատմականություն, որի հիմքի վրա ստեղծվել է առասպել

2. Առասպելն իրականում պատմություն է, սակայն մեհենական աղբյուրների ոչնչացման հետ ոչնչացվել են նաև առասպելի հետ կապված փաստեր:

Գրականության ցանկ

1. Աստվաշծաշունչ

2. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»

3. Սեբեոս «Պատմություն»

4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%A5%D5%AC

5. hy.wikipedia.org/wiki/Հայկ_նահապետ

6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%A2%D5%A5%D5%A9

7. https://arar.sci.am/Content/165803/file_0.pdf